**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երեւան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

**08.12.2022թ.**

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Պարոն Արարատ Գրիգորյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
**Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am**

Հարգելի պարոն *Գրիգորյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից Հայաստանի սուվերեն տարածքի վրա հարձակումից հետո մարզի գյուղատնտեսությունն ի՞նչ վնասներ է կրել:

2. Թշնամու կողմից թիրախավորված համայնքներում իրականացվե՞լ է բերքահավաք եւ աշնանացան: Եթե ոչ, ապա ինչու: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով չհավաքված կամ չցանված բերքի, մշակաբույսի տեսակը, տարածքները՝ մակերեսներով:***

3. Եթե վնասներ եղել են, իրականացվե՞լ է գույքագրում: Եթե գույքագրում չի եղել, ինչու՞: ***Տրամադրել գույքագրման տվյալներն ըստ համայքնների:***

4. 2022թ. սեպտեմբերի 13-ից հետո քանի՞ հեկտար հողամաս չի մշակվում՝ թշնամու կողմից թիրախավորվելու պատճառով:

Կանխավ շնորհակալություն

*Դիմող՝ Գ. Բալասանյան*

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 9482
09 12 2022թ.